ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
BRUSOV STATE UNIVERSITY

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМ. В. БРЮСОВА

0002, Երևան, Թումանյան փող. 42
0002, 42 Tumanyan St., Yerevan
0002, Туманяна 42, Ереван

Հեռ./Tel./Тел.(374 60) 830-111
Էլ. հասցե/E-mail/Эл.почта: info@brusov.am
http://www.brusov.am

60

N 01-20/964
«22» 11 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Ժ. 01.07 –«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության մասին

Նելլի Բակուրի Գալստյանի Ժ.01.07 մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի հայցման «Ազգային ինքնության թեման 20-րդ դարի ամերիկահայ անգլիագիր գրողների արձակում» թեմայով ատենախոսությունը ուսումնասիրում է ազգային ինքնության թեման 20-րդ դարի ամերիկահայ անգլիագիր այնպիսի գրողների արձակում, ինչպիսիք են Վ.Սարոյանը, Լ.-Զ.Սյուրմելյանը, Ջ.Հաշյանը, Հ.Խաչիկյանը, Փ.Բալաբյանը, Փ.Նաջարյանը, Փ.Սուրյանը, Ն.Գրիգորյանը, Ք.Էդզարյանը, Դ.Խրդյանը:

Ատենախոսությունը հետաքրքրության է արժանի ինչպես ընտրված խնդիրների ամբողջության, այնպես էլ հետազոտության մոտեցումների և մեթոդաբանության տեսանկյունից:

Միանգամայն հիմնավորված և կուռ տրամաբանության վրա է հիմնված ատենախոսության կառուցվածքը, ինչը հնարավորություն է ընձեռում հեղինակին համակողմանի հետազոտելու իր իսկ կողմից առաջ քաշված հիմնախնդիրները: Դրվատելի է ատենախոսի լրջամիտ, վերլուծական մոտեցումը օգտագործվող գրականության, նրա ձգտումը համադրելու, համեմատելու տարբեր հեղինակների աշխատություններից քաղված փաստերը և հանգելու ինքնուրույն եզրահանգումների: Օգտագործված գրականության քննական ակնարկը, որը զետեղված է ատենախոսության Ներածությունում, լավագույն ապացույցն է առ

այն, որ հեղինակը հստակ կողմնորոշվում է մեծածավալ գրականագիտական նյութի մեջ։

Նելլի Գալստյանի ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից։

Առաջին գլուխը վերնագրված է «Հայ-ամերիկյան էթնիկ գրականության հարցադրումները 20-րդ դարի ամերիկյան գրականության համատեքստում»։ Դրանում ներկայացվել են ամերիկահայ անգլիագիր գրականության ընդհանուր համապատկերը, 20-րդ դարի հայ-ամերիկյան գրականությունը ձևավորող գրողների գոյափիլիսոփայական և ազգային ինքնության պահպանման խնդիրները, հարցադրումներին առնչվող սկզբունքները, քննվել այն պատճառահետևանքային կապերն ու հանգամանքները, որոնց հիմքում ձևավորվել է հայ-ամերիկյան գրականությունը։ Վերլուծության համար ընտրվել են Վ.Սարոյանի, Լ.Զ. Այուրմեկյանի և Դ.Խոջայանի ստեղծագործությունները։

Ատենախոսության երկրորդ «Ազգային ինքնությունը և պատմական հիշողությունը հայ-ամերիկյան գրականության էվմնախնդիր» վերնագրված գլուխը պատմական հիշողության և ազգային ինքության հիմնախնդիրը ուսումնասիրում է Վիլիամ Սարոյանի պատմվածքներում, Փիթեր Սուրյանի, Մայքլ Արլեն Կրտսերի, Փիթեր Բալաքյանի և Քերոլ Էդգարյանի հուշագրություններում։

Ատենախոսության երրորդ «Ազգային ինքնության պահպանման փնտրտուքի խնդիրը հայ-ամերիկյան գրականության մեջ» գլխում անդրադարձ է արվել ազգային ինքության պահպանման փնտրտուքի խնդրին, քննվել «նահանջը» պատկերող Փ.Նաջարյանի «Ուղևորություններ», «Հիշողության դուստրերը», Նենսի Գրիգորյանի «Զարել» վեպերը որպես ազգապահպան մաքառումների, այլասերման, ազգայինից հեռացման դեմ։

Չորրորդ գլխում «Ազգային ոգու և ազատագրական պայքարի դրսևորման գեղարվեստական արտահայտումը հայ-ամերիկյան գրականության մեջ» ատենախոսը շեշտադրում է վեպերում առկա ազգային-ազատագրական պայքարի, ազգային ոգու և արժանապատվության յուրօրինակ դրսևորումների վրա, որոնք դարեր շարունակ հայ ժողովրդի ապրելու իրավունքի, ազգային ինքության պահպանման կարևորագույն գրավականն են։

Եզրակացության մեջ ի մի են բերվում հետազոտության արդյունքները։

Նյութի նմանօրինակ լայն ընդգրկմամբ և առաջադրված հիմնահարցերի բազմաձևությամբ հանդերձ, ատենախոսը կարողացել է իր գիտական

աշխատության մեջ համոզիչ լուծումներ տալ: Չունենալով սկզբունքային բնույթի դիտողություններ նրա կատարած հիմնարար աշխատության վերաբերյալ, այնուամենայնիվ անենք որոշ նկատառումներ.

1. Ատենախոսության ընդհանուր դիսկուրսը հիմնականում հրապարակախոսական է: Ցանկալի կլիներ ավելի խորացնել գրականագիտական վերլուծությունը:

2. Կարծում ենք ատենախոսի աշխատանքը առանձնանում է 20-րդ դարի հայ-ամերիկյան գրականության ընդգրկուն և համապարփակ ներկայացմամբ, սակայն թեզում արծարծվող հեղինակների, խնդիրների բազմազանությունն այնքան լայն է, որ գերադասելի կլիներ կենտրոնանալ սահմանափակ թվով հեղինակների վրա և խորամուխ լինել նրանց ստեղծագործությունների առավել հանգամանալի վերլուծությանը:

3. Որոշ տերմինների օգտագործման դեպքում ցանկալի է պարզաբանումներ կատարել: Օրինակ «նահանջի գրականություն» տերմինը օգտագործվում է ֆրանսահայ գրականության համատեքստում Շ.Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի վերնագրի հետ կապված: Խոսելով հայ-ամերիկյան գրականության մեջ «նահանջ» տերմինի մասին, ցանկալի կլիներ որոշակի հղում տալ ֆրանսահայ գրականություններ:

4. Հեղինակը տպագրության դեպքում խորհուրդ ենք տալիս ուշադրություն դարձնել տեխնիկական վրիպակներին:

Այնուամենայնիվ, վերոնշյալ նկատառումները չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը:

Ուսումնասիրության հիմնական արդյունքներն արտացոլված են գիտական հոդվածներում: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության հիմնական դրույթներին և ԲՈՀ-ի պահանջներին:

Այսպիսով՝ Նելլի Բակուրի Գալստյանը, արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի կոչմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի Համաշխարհային գրականության և քաղաքակրթությունների ամբիոնի 2023թ. նոյեմբերի 16-ին նիստում:

Ատենախոսության քննարկմանը մասնակցել են բ.գ.թ., դոցենտ Ս.Ապրեսովան, բ.գ.թ., դոցենտ Կ.Գուլանյանը, բ.գ.թ. Թ.Անտոնյանը:

ԲՊՀ-ի ռեկտորի ժ/պ, բ.գ.թ., դոց. Դավիթ Գյուրջինյան

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի

Համաշխարհային գրականության և քաղաքակրթությունների

ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Խաչատրյան Ն.Մ.

16.11.2023